

ՀՈՒՅՁԵՐ ՆՇՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԼԵՁՎԱԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հույզերի լեզվական արտահայտության տարաբնույթ միջոցների ուսումնասիրությունը առանցքային նշանակություն ունի ինչպես մարդկային զգացմունքների լեզվագիտակցական կարգայնացման մի շարք օրինաչափությունների բացահայտման, այնպես էլ հույզերի զանազան դրսևորումների նկարագրության, նույնականացման և տարանջատման, մի խոսքով՝ հույզերի բուն հոգեբանական հետազոտության տեսանկյունից: Մարդկային լեզուն կարևոր դեր ունի հոգեկանի հուզական ոլորտի հանրայնացման գործընթացում. հանրային դարավոր փորձը բյուրեղացնող լեզվական նշանակությունները հզոր «հասարակական գործիքներ» են, որոնց միջոցով միջնորդվում և համապատասխան իմաստ ու բովանդակություն են ստանում տվյալ մշակույթի ներկայացուցիչների հույզերը: Այդ գործընթացում լեզվի պատկերավոր - արտահայտչական միջոցների և դրանք լավագույնս ամփոփող գեղարվեստական լեզվի ունեցած սկզբունքային նշանակությանը բազմաթիվ անդրադարձներ են եղել: Մասնավորապես ռուսական հոգեբանական դպրոցի հիմնադիր Լ.Ս. Վիգոտսկին կարծիք է հայտնում, թե առհասարակ արվեստում և մասնավորապես գեղարվեստական լեզվում ներկայացված է «հույզերի հանրային տեխնիկան»:¹ Նրա պնդմամբ հոգեկանի հուզական ոլորտի մշակումը տեղի է ունենում արվեստում և մարդկային ստեղծագործության այլ ձևերում ամփոփված «հասարակական հույզերի» ներմիտման արդյունքում: Ա. Վ. Ջապորոժեցը և Յա. Ջ. Նևերովիչը, հետազոտելով երեխայի հույզերի օնտոգենետիկ զարգացման գործընթացը, շեշտադրումները տեղափոխում են դեպի ամօրյա-խոսակցական լեզուն: «Արվեստի լեզվի հետ միասին զարգանում և լայն կիրառություն են ձեռք բերում ամօրյա հաղորդակցության երբեմն

1. Выготский Л. С. „ Психология искусства „. Москва, 1968.

պակաս կատարյալ, սակայն այնուամենայնիվ միանգամայն գործուն արտահայտչական միջոցները».²

Յուլյեթի առօրյա հաղորդակցական լեզուն չի սահմանափակվում արտահայտության պատկերավոր միջոցներով. մարդկային ապրումների մարմնավորման լեզվական միջոցների հարուստ ֆոնդն ընդգրկում է լեզվի ծագումնաբանական տարբեր փուլերի և նշանային տարբեր նկարագրի միավորներ: Դրանով իսկ զգացմունքների արտահայտության լեզվական միջոցներն արտացոլում են մարդկային ապրումների գիտակցական կարգայնացման պատմական, և ուրեմն՝ նաև օնտոգենետիկ ուղու հիմնական փուլերն ու օրինաչափությունները, որոնք վերարտադրվում են մարդկային գիտակցության բազմամակարդակ համակարգի տարբեր շերտերում ու կարգերում: Այս առումով առանձնափառուկ հետաքրքրություն են ներկայացնում աշխարհի բազմաթիվ լեզուների բնորոշ՝ հույզեր նշող դարձվածքները, որոնց հիմքում, չնայած որոշ իմաստային տարբերություններին, գիտակցության միևնույն կարգային կառույցներն են:

Դուզական դարձվածքների ճանաչողական վերաբերության բացահայտման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի գիտակցության և լեզվական նշանակության կառուցվածքում հուզական ապրումի տեղն ու դերը ճշտելու խնդիրը: Գործունեության տեսության շրջանակներում ընդունված է գիտակցության եռաբաղադրիչ կառուցվածքը: Նշանակությունը ներկայացնում է արտացոլվող իրականության մասին հասարակության պատմական, լեզվական նշանակությունների համակարգում ամրակայված փորձը: Զգայական հյուսվածքը ճանաչվողի զգայական-իրադրական պատկերն է, իսկ անհատական իմաստը պայմանավորված է գիտակցության կողմնակալությամբ՝ կապված է անհատի պահանջմունքների, մոտիվների հետ, որոնց տեսանկյունից էլ գնահատում է արտացոլվող իրականությունը: Այս սկզբունքն իր արտահայտությունն է գտնում նաև նշանակության հոգեբանական կաղապարում, որտեղ համապատասխանաբար տարբերակվում են դեսիզնատ, դենոտատ և

2. Запорожец А.В., Неверович Я. З. К вопросу о генезисе, функции и структуре эмоциональных процессов у ребенка.// Вопросы психологии. 1974 N 6, с. 59-73 .

կոմոտատ բաղադրիչները: Նշանակության կառուցվածքի և գիտակցության պատկերի այս ըմբռնումներում զգայական հյուսվածք (դեմոտատ) և նշանակություն (դեսիգնատ) բաղկացուցիչները կազմում են ճանաչողության առարկայական բովանդակության զարգացող առանցքը: Ճանաչողության իմաստային-զնահատող կողմը, սակայն, այս հայեցակարգերում զուրկ է զարգացման դինամիկայից: Մինչդեռ հոգեբանական և հոգեվեգվաբանական բոլոր տեսություններում գիտակցության իմաստային կողմը առաջին հերթին բնութագրվում է իբրև հարատև շարժման և զարգացման մեջ գտնվող համակարգ:

Գործունեության տեսության շատ հետևորդների կողմից այդ բացը լրացվում է մի կողմից հույզ-իմաստ, մյուս կողմից հույզ-զգայական հյուսվածք ըմբռնումների միջև առկա հարաբերությունների նորովի մեկնաբանությամբ:

Գործունեության տեսության շրջանակներում իմաստի ըմբռնումը սահմանվում է ոչ միայն իմաստ-նշանակություն, այլև իմաստ-հույզ հակադրությամբ: Մերժելով հույզն ու իմաստը միևնույն հոգեկան պրոցեսի տարբեր դրսևորումներ դիտարկելու փորձերը՝ գործունեության տեսության ներկայացուցիչները հատուկ շեշտում են, որ հույզը գիտակցության մակարդակում պարզապես ազդանշում է անհատական իմաստի մասին և տեղի ունեցողի իմաստային մեկնաբանության՝ իմաստի հայտնաբերման խնդիր է ներկայացնում գիտակցությամբ: Դ.Ա.Լեոնտևն, օրինակ, խստորեն տարբերակելով ընկալման ռեակտիվ ձևը՝ անմիջական հուզական ցուցումը և անհատական իմաստի ռեֆլեքսիվ գիտակցումը, գրում է. «Անհատական իմաստը միշտ կոնկրետ է. բացահայտ կամ ներակա կերպով այն մատնանշում է այն մոտիվները, որոնք անհատական նշանակություն են հաղորդում տվյալ օբյեկտին կամ երևույթին: Իմաստը ոչ միայն միշտ ինչ-որ բանի իմաստ է, այլև ինչ-որ բանի հարաբերությամբ է իմաստ, իսկ այդ հարաբերությունը իր բնույթով միշտ կոնկրետ է: Հույզը, ընդհակառակը, տալիս է անհատական իմաստի սոսկ ընդհանուր մակերեսային բնութագիրը»:³ Նրա կարծիքով՝ թեև հույզը արտացոլում է զգայական պատկերի անհատական իմաստը, հուզական

3. Леонтьев Д.А. „Психология смысла,,. Москва, 1999. стр. 169.

արտացոլումը վերացականորեն է ներկայացնում առարկաների և երևույթների նշանակալիությունը՝ ի տարբերություն այդ նշանակալիության կենսական հիմքը մատնանշող իմաստի:

Եթե Ղ.Ա. Լեոնտևի կողմից հուզական ապրումին վերագրվող «անմիջականություն», «մակերեսայնություն», «ռեակտիվություն» բնութագրերը կիրառելի են անմիջական աֆեկտի վերաբերմամբ, ապա մարդկային իմաստավորված հույզերի հետ դրանք պարզապես անհամատեղելի են: Հագիվ թե ճիշտ է կարծել, որ մարդկային փոխհարաբերությունների մի ամբողջ դրամա ներկայացնող այնպիսի բարձրագույն զգացմունքներ, ինչպիսիք են խանդը, սերը, գոջումը և այլն, իմաստավորված չեն՝ չեն արտացոլում մարդու իրական կենսական հարաբերությունների ողջ բարդությունը:

Իրականում, սակայն, գործունեության տեսության մեջ հույզ-իմաստ կապի քննարկման գործընթացում նկատի է առնվում անմիջական զգացական ռեակցիան, որը գրգիռների դասակարգման և ընդհանրացման իր աղբատիկ սանդղակով, իսկապես, գիտակցության պատկերում անհատական իմաստը ներկայացնում է թեև վառ ու անմիջականորեն, բայց և բավականին ընդհանուր կերպով:

Աֆեկտի մուտքը լեզվական նշանակությունների համակարգ ենթադրում է հասարակայնացում՝ միջնորդվածություն հասարակական փորձով և ուրեմն նաև վերահսկում նույն այդ հասարակության կողմից: Աֆեկտը միջնորդող և վերակառուցող հասարակական գիտելիքը սուբյեկտիվ բնույթի է. այն ներկայացնում է տվյալ հասարակության արժեքները, նախապաշարումները, բարոյական և էսթետիկ փորձը: Անհատի հուզական փորձի ընթացքում կուտակվելով՝ այս ամենը ձևավորում է գնահատման մի կուռ համակարգ, ռեֆլեքսիվ մտածողության կարգերի սանդղակ, որի միջոցով մարդը իմաստավորում է իր ապրումները, ճանաչում, տարբերակում և վերահսկում դրանք:

Այս ամենը հիմք է տալիս Գ.Հովհաննիսյանին նշանակության հոգեբանական կադապարում կոնոտատ-կոնսիգմատ առանցքի ըմբռնման միջոցով լեզվական գիտակցության առարկայական-հասկացական և իմաստային-գնահատող կողմերի հավասարակշռությունը վերականգնելու: «Ճիշտ այնպես, ինչպես լեզվական նշանի կառուցվածքի հասկացական կողմը, այնպես էլ

բառիմաստի հուզագնահատողական բաղադրիչը բաղկացած է երկու հստակորեն տարանջատվող դիտվածքներից. կոնոտատ (Cn) կամ էքստենսիոնալ դիտվածք՝ զգացմունքների սուբյեկտիվ իրադրական դրսևորում, որ բացահայտում է անձի անհատական բնութագրերը, նրա խառնվածքը, ստեղծագործականությունը և այլն, կոնսիգնատ (Cs) կամ ինտենսիոնալ դիտվածք՝ գնահատողական վերաբերմունք, մշակույթով պայմանավորված նշանակության բաղադրիչների և ավանդական ստերեոտիպերի դրսևորում»:⁴

Այսպիսով, լեզվական նշանի և իմաստային-նշանակցական կողմում, և նշանակության կառուցվածքում դիալեկտիկական միասնություն են կազմում բնախոսական- զգայականն ու գիտակցականը, ընկալումն ու պատկերը, անհատական ու հասարակականը և այլն:

Փաստորեն, անմիջական հուզական ընկալումը գիտակցության պատկերում անհատական իմաստի առաջնային, ընդհանրացված ազդանշումն է: Պատկերավոր ասած՝ հուզական ռեակցիան գիտակցությանը փոխանվանաբար ներկայացնում է ճանաչվող իրականության անհատական իմաստի միայն բնախոսական բաղկացուցիչը: Սա նկատի ունենալով՝ Ֆ. Ե. Վասիլյուկը ընդլայնում է գործունեության տեսության մեջ ընդունված զգայական հյուսվածքի ըմբռնումը՝ հույզը համարելով անհատական իմաստի զգայական հյուսվածքը: Վերջինս, ըստ Վ. Կ. Վասիլյուկի, գիտակցության պատկերի կառուցվածքում ներկայացնում է մարդկային մարմինը:⁵ Անհատական իմաստը, ձևավորված լինելով հասարակության «իմաստային» փորձի ներմիտման, հասարակական արժեքների՝ անհատական վարքի դրդիչ մոտիվների վերածվելու գործընթացի արդյունքում, բեկում է բնախոսական ռեակցիան գիտակցության գնահատող գործունեության հայելու մեջ:

Զգայական հյուսվածքի նման լայն ըմբռնում բնորոշ է հոգելեզվաբանական շատ հայեցակարգերի, որոնցում հետևողականորեն զարգացվում է այն տեսակետը, թե զգայական հիմք, այսինքն՝ ընկալման ենթակա նախնական

4. Հովհաննիսյան Գ. Ռ. «Ժամանակի հոգելեզվաբանական հայեցակարգը» Ե., 2001, էջ 52:

5. Васьлюк Ф.Е. Структура образа//Вопросы психологии. 1993. N5, с.5-19.

նյարդաբնախոսական «հումք», ունեն լեզվական նշանակության բոլոր միավորները՝ և դեմոտատը, և դեսիգնատը, և կոնոտատը, և ուրեմն մաս կոնսիզմատը: Ֆ. Ե. Վասիլյուկը մասնավոր օրինակներով բացահայտում է առաջին չորս բաղկացուցիչների կոնկրետ հոգեբանական բովանդակությունը:⁶ Ձգայական հյուսվածքի այսպիսի սահմանումը համահունչ է հոգելեզվաբանական շատ դպրոցներում ընդունված՝ գիտակցության՝ իբրև բազմամակարդակ կառույցի ըմբռնման հետ: Այսպես, Վ.Պ. Ջինչենկոյի առաջադրած կաղապարում իմաստն ու նշանակությունը ձևավորում են գիտակցության ռեֆլեքսիվ մակարդակը, մինչդեռ զգայական հյուսվածքը հանդես է գալիս որպես օբյեկտի՝ սուբյեկտին ներկայանալու առավել ցածր աստիճանի միավոր և գործողության կենսադինամիկ հյուսվածքի հետ միասին կազմում է գիտակցության կեցությանի մակարդակը՝ ռեֆլեքսիվ մակարդակի զգայական հիմքը:⁷ Կենսադինամիկ հյուսվածքի՝ իբրև գործողության պատկերի գաղափարը վաղուց ի վեր հայտնի է հոգելեզվաբանությանը և տարբեր տեսություններում հիշատակվում է օպերացիոնալ, գործունեական, նորմատիվ կամ դերային նշանակություն և այլ անվանումներով: Այն գիտակցության մեջ ամրակայվում է «գործողության ընդհանրացված պատկերի» ձևով և «գոյություն ունի գործողության բաղադրիչների զգայական հիմքի վրա»:⁸ Ա.Ա. Լեոնտևը մասնավորեցնում է, որ իր տերմինաբանությամբ՝ դերային նշանակության օրինակներ են հասարակական դերերն ու նորմերը:

Ըստ մեզ՝ լեզվական նշանակության չորս՝ դեմոտատ, դեսիգնատ, կոնոտատ և կոնսիզմատ բաղկացուցիչներից հատկապես վերջինս՝ որպես նշանակության մշակությանի բաղադրիչ, առավել հաճախ կարող է զարգանալ հասարակական գործունեության կենսադինամիկ հյուսվածքի հիման վրա: Եթե անհատական իմաստի (Շո) նյարդաբնախոսական հիմքը աֆեկտն է՝ հուզական բնախոսական ռեակցիան, ապա հասարակական իմաստների

6. Василюк Ф. Е. Указ. соч.

7. Зинченко В.П. Миров сознания и структура сознания. //Вопросы психологии. т. 2. 1991.

8. Леонтьев А. А. Формы существования значения // Психолингвистические проблемы семантики. М. 1983. с. 5-20.

համակարգը ներկայացնող կոնսիզմատի ընկալման և գիտակցության մեջ ամրակայման զգայական հիմք կարող են հանդիսանալ հասարակական գործունեության ձևերի՝ ծեսի, դերի, ժեստի և այլնի պատկերները: Ինչպես ցույց են տալիս հոգեկանի օնտոգենետիկ զարգացման ուսումնասիրությունները գիտակցության հուզական- իմաստային ոլորտը հանրայնացվում է հասարակական դերային գործունեության՝ սկզբում պարզապես արտաքին ձևի, ապա և դրանում ամփոփված հասարակական իմաստների յուրացման գործընթացում: Այլ խոսքով՝ լեզվական գիտակցության հուզական- իմաստային կողմի զարգացումը սկսվում է մի կողմից բնախոսական ապրումի, մյուս կողմից՝ հասարակական ձևի զգայական տպավորություններից և շարունակվում այդ երկու տարբեր բևեռների ռեֆլեքսիվ իմաստավորմամբ: Ինչպես գրում է Վ. Պ. Զինչենկոն, կենսադինամիկ հյուսվածքը, որ կենդանի գործողության դիտարկելի արտաքին ձևն է, ունի նաև ներքին ձև, որն իր զարգացմանը զուգընթաց հարստանում է ճանաչողական, հուզական- գնահատողական, իմաստային կազմավորումներով, ի վերջո նաև միջնորդվում լեզվի պայմանական նշաններով:⁹

Եթե գիտակցության ռեֆլեքսիվ մակարդակի միավորները սովորաբար գիտակցված են և ամրակայված լեզվական նշանակությունների համակարգում, ապա կեցության մակարդակի բովանդակությունն առավել հաճախ ռեֆլեքսված չէ, գոյություն ունի զգայական պատկերների ձևով, որոնք, ի տարբերություն մտապատկերների, սինկրետիկ կազմ ունեն և դեռևս զուրկ են հստակ նշանային նկարագրից: Եվ այնուամենայնիվ, ցանկացած մշակութթուն և լեզվում գոյություն ունեն նաև գիտակցության կեցության մակարդակի ռեֆլեքսման միջոցներ, որոնք բացահայտում են տվյալ հանրության «աշխարհի նախնական պատկերը», կարծրատիպերը, առօրեական պատկերացումները, որոնք ևս տվյալ ժողովրդի մշակութային ժառանգության ու նաև գիտակցության անբաժանելի մասն են: Գիտակցության բազմամակարդակ համակարգի այսպիսի ինքնառեֆլեքսումը պայմանավորված է մարդկային մտածողության կարևորագույն որակներից մեկով՝ զուգորդականությամբ, որ

9. Зинченко В. П. Указ. соч.

միմյանց է կապում գիտակցության զանազան շերտերը և հնարավոր դարձնում ստորին մակարդակների ներկայացվածությունը լեզվագիտակցության մեջ:

Գիտակցության զանազան մակարդակները մշտապես փոխազդեցության մեջ են, և իրական մտածողությունը գիտակցության նշանային մակարդակներից դեպի ոչ նշանային շերտերը և հակառակն ուղղված շարժում է: Ե. Վ. Ուլիբինայի կարծիքով առօրեական գիտակցությունը միջնորդող դեր ունի. այն նշանային արտահայտություն ունեցող «պաշտոնական» մշակույթը հարմարեցնում է մինչնշանային «բնական կյանքին»:¹⁰

Եթե գիտակցության ռեֆլեքսիվ մակարդակն առավել համարժեք կերպով արտահայտվում է մարդկային հասկացական լեզվի պայմանական նշանների համակարգում, ապա կեցության մակարդակին բնորոշ են պատճառաբանված նշանները՝ խորհրդանիշները, այլաբերությունները, դարձվածքները և այլն: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ ընկալման նախնական զգայական պատկերների չդիսկրետավորված, իմաստային մեկնաբանության ըստ էության անսահմանափակ ծավալներով օժտված բովանդակությանը համապատասխանում են առավել բարդ ոչ պայմանական նշանները, ինչպիսիք մասնավորապես դարձվածքներն են:

Հույզեր նշող դարձվածքների առկայությունը բազմաթիվ լեզուներում հոգելեզվաբանական տեսանկյունից միանգամայն օրինաչափ է. դարձվածքներում և ժողովրդական ստեղծագործության այլ բազմաթիվ ձևերում ևս, ինչպես ըստ Մ. Կ. Մամարդաշվիլու առհասարակ արվեստում, մենք գործ ունենք «խիստ կազմակերպված հասարակական ձևի հետ, որին մարդը հետևում է իրադրության անորոշության կամ այն վերլուծելու անհնարինության դեպքում»:¹¹ Դարձվածքներում բյուրեղացած ինֆորմացիան սովորաբար վերաբերում է արտալեզվական իրականության այնպիսի երևույթների, որոնց հասարակությունը դժվարանում է ռացիոնալ բացատրություն տալ: Ահա թե

10. Улыбина Е. В. Личность и чужое слово: индивидуальное и массовое сознание в психоаналитическом контексте. Ставрополь. 1997. с. 73.

11. Мамардашвили М. К. Обязательность формы. // Вопросы философии. 1976. N12 с. 134.

ինչու, բոլոր լեզուներում դարձվածքների գերակշիռ մեծամասնությունը (մոտ 95%) վերաբերում է գործունեության սուբյեկտիվ կողմին, մարդկային փոխհարաբերություններին, որոնց մասին հանրային գիտելիքը հիմնված է ոչ թե օբյեկտիվ փորձի, այլ ավանդույթների, նախապաշարումների, հավատալիքների վրա, այլ խոսքով՝ հասարակական վերագրման արդյունք է: Պատահական չէ, որ հոգեկանի այնպիսի անկայուն և «անբացատրելի» ոլորտ, ինչպիսին հուզականն է, այդքան շատ է արժարժվում դարձվածքներում, որոնք ոչ միայն անվանում են այս կամ այն արտալեզվական երևույթը, այլև, դարձվածքային անվանման յուրահատկությամբ պայմանավորված, արդեն իսկ որոշակի՝ հուզական և ռացիոնալ բնույթի տեղեկություն հաղորդում վերաբերյալի մասին:

Այն, որ հուզական վիճակներ նկարագրող դարձվածքները օբյեկտավորում են գիտակցության կեցության մակարդակի բովանդակությունը, կարելի է տեսնել պարզ իմաստաբանական վերլուծությամբ: Այսպես, աշխարհի բազմաթիվ լեզուների, այդ թվում նաև հայերենի հույզեր անվանող դարձվածքների շարքում առանձնանում են մի կողմից բնախոսական փոփոխություններ նկարագրող (օրինակ՝ սիրտը ճաքել, արյունը գլխին խփել, արյունը ջուր դառնալ), մյուս կողմից՝ հասարակական «ձևը», նորման, ավանդույթը էքսպլիկացնող (սևը կապել, ձեռքերը հինա դնել) դարձվածքները: Գիտակցության պատկերի և լեզվական նշանակության վերոհիշյալ կադապարները նկատի ունենալով՝ կարող ենք պնդել, որ առաջին խմբի դարձվածքներն օբյեկտավորում են անհատական իմաստի զգայական հյուսվածքը՝ բնախոսական ռեակցիան, մինչ երկրորդ խմբի դարձվածքներում գիտակցման առարկան հասարակական գործունեության արտաքին ձևն է, կադապարային տերմինաբանությամբ՝ կոնսիգնատի զգայական հիմքը՝ կենսադինամիկ հյուսվածքը:

Փաստորեն հույզեր անվանող և «բնախոսական», և «մշակութային» դարձվածքներում առկա է փոխանունություն. առաջին դեպքում բարդ հոգեբանական երևույթը հանգեցվում է իր բնախոսական բաղկացուցչին, երկրորդ դեպքում առաջ է մղվում մշակութային բաղադրիչը:

Առօրեական գիտակցության մակարդակում կատարվող այսպիսի՝ մերթ քմախոսական, մերթ էլ սոցիոլոգիական ռեդուկցիան բացատրվում է հուզական

ապրումի բուն հոգեբանական էության մասին գիտելիքի բացակայությամբ և երբեմն բնորոշ է նաև գիտական մտածողությամբ: Ջեյմս Ավերիլը նույնիսկ կարծիք է հայտնում, թե հույզերի շուրջ լեզվական պատկերացումներն ու փոխաբերությունները Արևմտյան հոգեբանական գիտության շրջանակներում բազմաթիվ չարաշահումների առիթ են դարձել:¹² Այդպիսի չարաշահումների արդյունք են, ըստ նրա, հույզերի «բնախոսական տեղակայման» փորձերը, որոնցից ամենահայտնին Ջեյմս-Լանգեի տեսությունն է: Վերջինիս համաձայն հույզի սուբյեկտիվ ապրումը հենց բնախոսական փոփոխությունների ընկալումն է և յուրաքանչյուր հույզ ունի հակազդման իր ուրույն կաղապարը, այլ խոսքով՝ կապված է կենտրոնական նյարդային համակարգի որոշակի հատվածի ակտիվացման հետ: Փաստորեն, ըստ Ջեյմս-Լանգեի տեսության, հույզերը մարմնի այս կամ այն մասի, օրգանի հետ կապելու միտումը, որ առկա է տարբեր լեզուների՝ հույզեր անվանող դարձվածքներում, գիտական հիմքից զուրկ է:

Հույզերի հասարակական տեսությունների ներկայացուցիչներն, ընդհակառակը, կարծում են, որ հուզական ապրումը հասարակական կաղապարման արդյունք է և որոշակի հույզերի հետ կապված բնախոսական զգայությունների շուրջ պատկերացումները մշակութային և լեզվական պայմանավորվածություն ունեն: Հուզական դարձվածքների «լեզուն», որ արտացոլում է հոգեկանի հուզական ոլորտի շուրջ տվյալ ժողովրդի առօրեական պարզունակ պատկերացումները, հիմնված է մշակութային փոփոխականների վրա և չի կարող հույզերի նյարդաբնախոսական մեխանիզմների ճշգրիտ նույնականացման աղբյուր լինել: Այլ հարց է, որ դարձվածքներում արտահայտված նման ըմբռնումները վերարտադրվում են տվյալ լեզուն կրողների գիտակցության որոշակի կարգային կառույցներում, որոնց միջոցով էլ այդ հանրության ներկայացուցիչները ճանաչում և գնահատում են իրենց և ուրիշների զգացմունքները: Գիտակցության կարգային կառույցները սերտորեն միահյուսված են զգայական պատկերներին, այդ թվում և մարմնական փոփոխությունների

12. Averill J.A. A Constractivist View of Emotions // Emotion: Theory, Research and Experience. Volum 1. New York. 1980.

ընկալումներին, որոնք անհրաժեշտորեն միջնորդված են մարդկային մարմնի մասին Կվյալ համրության փորձն ու Կեսակեպը ամփոփող նշանակությունների համակարգերով:

Ձ. Ավերիլի դիպուկ արտահայտությամբ՝ հույզերը մարմնական փոփոխությունների հետ կապող լեզվական միջոցներում մենք գործ ունենք «հոգեբանախոսական սիմվոլիզմի» հետ¹³: Այլ խոսքով՝ հուզական դարձվածքներում մատնանշվող մարդկային մարմնի մասերն ու օրգանները խորհրդանշական բնույթ ունեն: Այսպես, Ե.Գևորգյանի դիտարկմամբ «երես» բառը հայերենում խորհրդանշում է ամոթ:¹⁴ Օրինակ՝ երեսը պինդ լինել, երեսը գոնջի կաշի չինել, շան երես ունենալ, փափուկ երես ունենալ, երեսից ընկնել, երես առնել:

«Լեղի և «յարդ» բառերը հայերենի դարձվածքներում հիմնականում հանդես են գալիս իբրև հոմանիշներ և սովորաբար կապված են վախենալ – քաջալերվել առանցքի հետ: Օրինակ՝ լեղին ջուր կտրել, լեղին պատռվել, լեղին ճաքել, լեղապատառ լինել, լեղին փոթել, լերոն ու թոքը ջուր կտրել, լեղի ունենալ:

Տ. Ձ. Չերդանցևայի պնդմամբ իտալերենում ևս «յարդը» զուգորդվում է քաջության հետ, մինչդեռ ֆրանսերենում միևնույն գործառույթն ունի «ստամոքս» բառը:¹⁵

Հայերենում, ինչպես և աշխարհի բազմաթիվ լեզուներում, բավականին մեծ իմաստային ծանրաբեռնվածություն ունի «սիրտը». զանազան կապակցություններում այն կարող է խորհրդանշել ամենատարբեր զգացմունքներ: Հայերենում դրանք մոտավորապես հետևյալն են.

վախենալ- սիրտը ահ ընկնել, սիրտը դող ընկնել, սիրտը կանգնել, սիրտը ճաքել, սիրտը յոթ պատառ դառնալ, սիրտը պատառ-պատառ լինել, սիրտը պորտի գլուխը թռչել, սիրտը ջուր դառնալ, սիրտը վեր թռչել, սիրտը փորումը ծիավոր դառնալ, սիրտը փոթել, սիրտը կոնակը ծեծել

13. Averll J.A. Նշված ստեղծ.:

14. Գևորգյան Ե.Յ. «Հայերենի դարձվածքները» Ե., 1965:

15. Черданцева Т. З. Метафора и символ во фразеологических единицах // Метафора в языке и тексте. Москва 1988 .

ուրախանալ – սիրտը բացվել, սիրտը լիանալ, սիրտը յուզ կապել, սիրտը յոթ թիզ բաց լինել, սրտում պարտեզ բացվել

տխրել, վշտանալ – սիրտն արյունել, սիրտն արյուն լալ, սիրտը դառնությամբ լցվել, սիրտն արյուն կապել, սիրտը դատարկ լինել, սիրտը կոտորվել, սիրտը վախ ընկնել, սիրտը խորովվել, սիրտը կտոր-կտոր լինել, սիրտը մաշվել, սիրտը մղկտալ, սիրտը սղմվել, սիրտը սևանալ

սաստիկ հուզվել – սիրտը բերանը գալ, սիրտը բերանից դուրս գալ, սիրտը զոցել, սիրտը ելնել, սիրտը զարկել, սիրտը թունդ հանել, սիրտը թրթռալ, սիրտն իրեն ուտել, սիրտը լցվել, սիրտը խաղալ, սիրտը խաշ լինել, սիրտը ծառս լինել, սիրտը պղտորվել

զայրանալ – սիրտը շուռ գալ, սիրտը տրաքվել, սիրտը ելնել, սիրտը շուռ գալ, սրտախաղ լինել

քաջալերվել – սիրտ առնել, սիրտ անել, սիրտը ամուր պահել և այլն:

Հատկանշական է, որ որոշ դարձվածքներում «սիրտը» խորհրդանշում է առհասարակ զգացմունքների աշխարհը (օր.՝ սիրտը անապատ դարձնել):

Բերված օրինակներից ակնհայտ է դառնում, որ հույզերը մարմնական փոփոխությունների հետ կապող դարձվածքներում գործ ունենք ոչ միայն պարզ «բնախոսական փոխանունության», այլ շատ ավելի բարդ հոգեվեգվա-բանական երևույթի հետ:

Մարմնի մասերն ու օրգանները, որոնց հղում է կատարվում բնախոսական փոխանունության միջոցով, հուզական դարձվածքներում վերաիմաստա-վորված են մշակութաբանական զանազան գործոնների ազդեցությամբ և փաստորեն այլևս ոչ այնքան բնախոսական, որքան մշակութային հարացույցի կարգեր են: Ըստ էության, բնախոսական երևույթներ նշող բառ-բաղկացու-ցիչները, խորհրդանշական իմաստ ձեռք բերելով, բարդ հոգեկան երևույթ անվանող դարձվածքի կազմում ներկայացնում են այն հանրահայտը, ճանաչ-վածը, որի մասին արդեն մոր տեղեկություն են հաղորդում դարձվածքային կապակցության մյուս բաղադրիչները: Վերջիններիս միջոցով կատարվող հատկանիշի վերագրումը, որպես կամոն, փոխաբերական բնույթի է: Հուզական

դարձվածքի իմաստային յուրահատկությունը պայմանավորող վերոհիշյալ բոլոր ռճարտահայտչական միջոցներից առաջատար դերը պատկանում է հենց փոխաբերությանը: Այսպես, փոխանունությունը, որի գործառնությունը դարձվածի իմաստային կառուցվածքում պայմանավորված է մարմնի մասեր նշող բառ-բաղադրիչների ուղիղ իմաստով, առաջ է մղում անվանվող հոգեկան երևույթի բնախոսական կողմը: Միևնույն բնախոսական երևույթների խորհրդանշական վերաիմաստավորմամբ դարձվածք է ներմուծվում հասարակական նորման: Մինչդեռ փոխաբերության լեզվական գործառնությոն բուն հոգեբանական բաղկացուցչի՝ իմաստի, այլ խոսքով՝ անվանվող երևույթի անհատական կամ հասարակական նշանակալիության մատնանշումն է: Իմաստավորումը, ինչպես նշվեց վերևում, հուզական ապրումնի սուբյեկտիվ հոգեբանական բովանդակությունը պայմանավորող գիտակցական գործընթացն է, որն արտահայտելու ու հաղորդելու համար դարձվածքներ ստեղծող ժողովուրդը համեմատության եզրեր է որոնում իր օբյեկտիվ փորձում (կոտրվել (սիրտը), ճաքել (լեղին), և այլն):

Այսպիսով, հույզեր անվանող դարձվածքներն աչքի են ընկնում բավականին բարդ իմաստաբանական կառուցվածքով, որ պայմանավորված է լեզվական արտահայտչականության մի շարք միջոցների բարդ համադրությամբ, ինչը միանգամայն օրինաչափ է հույզերի լեզվական կարգայնացման համար. «Հույզի ուլորտը չունի նշանային արտահայտության իր սեփական համակարգը, կաշկանդված - անազատ հույզը իր արտահայտության համար օգտագործում է կամ (հակա)բնական դիրքեր, հայացքներ, շարժումներ կամ բառային շաբլոններ, մինչդեռ ազատ զգացմունքը անկեղծ պոռթկման մեջ հասնում է հուզական և բանական սկիզբների սինթեզին, նշանային պայմանականության և բնականության համադրությանը: Նրա լեզուն միջնորդված - փոխաբերական կամ խորհրդանշական արտահայտության մի համակարգ է: Այդ իսկ պատճառով արվեստը, որ ներակայորեն կապված է մարդկային զգացմունքների հետ, մեծ մասամբ խորհրդանշային կազմավորում է»:¹⁸

16. Атаян Э. Р. „Болезнь здоровых,, Ер. 1997. с. 88.

Հուլյան Եղոյ «մշակութային» դարձվածքները, որ ներկայացնում են հուլական գործունեության հասարակայնորեն մշակված ձևերը, քանակով անհամեմատ քիչ են ինչպես հայերենում, այնպես էլ մյուս լեզուներում և համեմատաբար պարզ իմաստային կառուցվածք ունեն։ Սրանք, ըստ էության, պարզապես նկարագրում են այս կամ այն ժխական ժեստը, որն ինքնին՝ լեզվի դարձվածային համակարգից դուրս արդեն, խորհրդանշական բնույթ ունի, ինչպես օրինակ՝ ձեռքերը ծնկին խփել, մազերը պոկել, երեսը պոկել, ձեռքերը հինա դնել դարձվածքներում։

Ձգացմունքներ անվանող և՛ «բնախոսական», և՛ «մշակութային» դարձվածքներում ներկայացված է հուլական ապրումի իմաստը ինչպես արտաքին արտահայտման, այնպես էլ ընկալման համար «մոդելավորող» զգայական նյութը. մի դեպքում դա բնախոսական փոփոխությունն է՝ իր արտաքին և ներքին դրսևորումներով, մյուս դեպքում՝ հուլական վարքի հասարակական կադապարը, որոնք էլ ի վերջո հուլական ապրումի ձևավորումը պայմանավորող երկու կարևորագույն գործոններն են։